

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

**ՀՈՂՎԱԾ 1.** «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (2005 թվականի հուլիսի 8-ի ՅՕ-164-Ն, այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի «անապահով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղված» բառերով:

**ՀՈՂՎԱԾ 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «բնագավառների» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում» բառերով:

**ՀՈՂՎԱԾ 3.** Օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ կետը «ձեւերով ուսուցման» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայր գործուղման համար» բառերով:

**ՀՈՂՎԱԾ 4.** Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝

1. առաջին պարբերությունում «անապահով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղված» բառերը:

2. երրորդ պարբերությունում «համար» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղված ուսանողներին» բառերով:

**ՀՈՂՎԱԾ 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հեղինակ՝ [Ռուզաննա Առաքելյան](#)